



ՏՆՕՐԻՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 26

ՀԱՐԱՐԱԹ

24 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

Կ. ՊՈԼՏՈՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 50 Ղրշ.

Վեցամսեայ 25 »

ԳԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ

Տարեկան 54 Ղրշ.

Վեցամսեայ 27 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

Տարեկան 42 Ֆր.

Վեցամսեայ 6 »

Զ Ե Ն Ի Թ

Իր ամէն մասանց մէջ կատարելապէս խնամուած միակ ժամացոյցը զոր կարելի ըլլայ յանձնարարել և երաշխաւորել այն բացարձակ ճշտութեան համար՝ որ իր յատկանիշն է :

ՄԵՍ ՄՐՑԱՆԱԿ ԲԱՐԻՉ 1900.

ԱՐՏԱՔՈՑ ՄՐՑՄԱՆ ՄԻԼՍԵ 1906,

Հանդերձ ժիւղի անդամակցութեամբ.

Թուրքիոյ և բոլանդակ Արեւելքի համար միակ ներկայացուցիչը

Գ. ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

Մեծ մթերանոց ամէն տեսակ ժամացոյցներու, շղթաներու և գոհարեղէններու :

Կ. Պոլիս, Պաղչի-գաբու, Օռոգսի-Պաֆ (Էօսէր-եֆէնի) վաճառասան դիւան Թիւ 16,


ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصادوریان) شرکت مرتبه مطبوعه — باب عالی جاده نند تهران ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹ ԻԻՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառսկսի Թիւ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
 ֆիանգամայն մեքենաներ
 կը գտնուին

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՆԱԲԱԹԱՍԿԱՆ
 ՄԱՍՆԱՆԶԱՐԱՆՆԵՐ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԱԻԻՏԱՐ | Զարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղաֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւզդուլուի տունը :

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ , բայց էական կէտն է՝ լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅԹԱՅՈՒՅ ԿԸՑԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լազործուածը , հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 26

ՇԱՐԱԹ

24 ՓԵՏՐՈՒԱՐ 1907

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԷՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ



ԱՄԱԹԷՈՒՄԻ ՄԸ ԿՈՂՄԷ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԱԾ

Մ Ա Հ

ԱԶՆ. ՏԻԳՐԱՆ ԷՖԵՆՏԻ ՃԻՎԷԼԷԿԵԱՆԻ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

« ՃԷՐԻՏԷԻ-ՇԱՐԳԻՅԷ » ԵՆ « ՍՈՒՐՀԱՆԴԱԿ » ԿՐԿԻՆ ԹԵՐԹԵՐՈՒ

Բազմադիրն անձնաւորութիւն մը եւ սիրուած դէմք մը կը պակսի գրական եւ օրագրական հրապարակէն, մահովը՝

ԱԶՆ. ՏԻԳՐԱՆ ԷՖԵՆՏԻ ՃԻՎԷԼԷԿԵԱՆԻ

Հայ լրագրութեան մէջ շատ դժուար է գտնել վարիչ-խմբագրապետ մը, որ կարենայ երեսուն երկար տարիներ անընդհատ շարունակել գրական բազմապահանջ գործ մը, եւ շահիլ ամէն կերպով համայնքին սէրն ու համակրանքը :

Այսպիսի դէմք մըն էր Տիգրան Էֆ. Ճիվէլէեան, որուն սուգը կ'ողբան այսօր իր ընտանիքէն եւ գերդաստանէն զատ ամէն անոնք՝ որոնք հեռուէն քէ մօտէն ծանօթութիւն ունենալով Հանգուցելոյն հետ, ճանչցած ու գնահատած էին իր բարեկամական զգացումները եւ ազնուութիւնը :

Պարբաթ ժամը 4ին Բերա Յովհան Ոսկեբերան եկեղեցին կատարուեցաւ յուղարկաւորութեան Տիգրան արարողութիւնը :

Հանդեսին կը նախագահէր Սահակ Արեւայիսկոպոս Հանեան : Իսկ Հանդիսադիրն էր Տ. Նիկողոս Ծ. Վրդ. Պապեան, շուրջ ունենալով վեց վարդապետներ :

Ս. Պատրիարք Հօր կողմէ մասնաւորաբար դիմուած էին Տ. Բաբգէն եւ Տ. Տիրայր Ծ. Վարդապետները :

Եկեղեցին ամբողջ լեցուած էր Հայ եւ քէ Հռովմեական յուղարկաւորներու ընտիր բազմութեամբ մը :

Յաւատք արարողութեան Հայր Գ. Ծ. Վրդ. Մենեվիլեան՝ պերն դամբանականով մը դրուաւ իր ըրաւ Հանգուցելոյն բարեմասնութեանց եւ զայն ներկայացուց իբր Տիգրանին, օրինակելի հայր եւ հաւատարմ անհատ :

Դազաղը համակ ընկուզենիք էր, զոր կը կրէին կրկնակ քերթերու գրաւարները : Մեռելական արարողութիւններէն վերջ նոյն հանդիսաւոր քափորով դազաղը տարուեցաւ Շիտակ ճամբան, ուր շէնդ կառքի մը մէջ դրուելով առաջնորդուեցաւ Շիշիի գերեզմանատունը :

Ներկաները իրենց խորին ցաւակցութիւնները յայտնեցին իր հարազատին՝ Յակոբ Էֆենտիի եւ Սարգիս Էֆ. Սիմոնօֆի :

Խմբագրութիւնն խորապէս զգածուած՝ իր ցաւակցութիւնները կուգայ յայտնել՝ Այրի Տիվին Գայիանէ Ճիվէլէեանի, Ճիվէլէեան հարազատներուն եւ ամբողջ պարագային :

ԻՆՉՊԵՍ ԳՐԱԳԵՏ ԵՂԱՅ

Ես գրագէտ եղած եմ պարզապէս դիպուածով, դիպուած մը որ փոխանակ ծառայող գրագէտ ընելու, կրնար, օրինակի համար, թրամվէյի մը անհետնորուն տակ և կամ երկաթուղիին գծին վրայ նետել՝ կառաքուածը անցած պահուն, ինչպէս նաեւ այդ մի և նոյն դիպուածը կրնար — քիչ մը աւելի հաճոյակատարութեամբ — այդ երկաթուղիին ... 600,000 ֆրանք շահող թիւը ձեռքիս մէջ դնել, և դարձեալ այդ դիպուածը՝ դիպուած ըլլալէ չէր դադրեր, և ես ալ չէի սկսեր գրագէտ ըլլալու, կ'երգնում ձեզի, որովհետեւ ինծի այնպէս կը թուի թէ շատ աւելի աղէկ է 15,000 ոսկիի տէր ըլլալ քան թէ գրչի:

Ընթերցողներ ձեր անհատիկ որուն շատ պիտի հաւնէր Պարոն Լաբալիս:

Երբ յաճախ կը տեսնէք այնպիսիներ որ սոսկ դիպուածով մը հայր կամ մայր եղած են, ինչո՞ւ այնքան կը զարմանաք երբ ձեզի կը վստահեցնեն թէ իմ գրագիրութիւնս ամբողջովին դիպուածի մը կը պարտիմ:

1892 Դեկտեմբեր 16ի օրը եթէ հովանոցս հետս առած ըլլայի, բնաւ տարակույս չի կայ որ մինչեւ այսօր տող մը գրած չպիտի ըլլայի:

Ուրկէ կը հետեւցնեն թէ ինքնին աննշան դարագայ մը կրնայ շատ մը անակնկալներու և աղէտներու պատճառ ըլլալ:

Ուրիշները իրենց գրական համբաւը կը պարտին իրենց տաղանդին, ուսմունքին, աշխատութեան. ես ալ ... հովանոցիս, հովանոց մը՝ որ միտաքսէ անգամ չէր դժբաղդարար:

Այդ նշանաւոր օրունի նախընթաց գիշերը երկինքը այնքան պայծառ և օդը այնքան քեղեցիկ էր որ Բերայի մէջ գիշերելու համար հովանոցս հետս առնել հարկ չէի տեսած:

Օգը՝ այն ներկուած կիներուն կը նմանի, որոնք աղւոր կը պառկին և տգեղ կ'արթննան:

Հետեւեալ առաւօտ երկինքը ամպամած էր:

Շիտակ ճամբուն վրայ եմ երբ յանկարծ տեղատարափ անձրեւ մը կը սկսի: Հազիւ

ժամանակ կ'ունենամ Սիթէ տ'Ալէքի դրան մէջ ապաստանելու:

Բարեկամ մը նոյն բանը ըրած էր ինչ առաջ:

Ձիս տեսնելուն պէս ձեռքս սեղմելով՝

— Ինծի ծառայութիւն մը ընել և հաճոյք մը պատճառել կ'ուզեմ, կը հարցնէ:

— Երկուքը միասին, այո՛, բայց զատ զատ ո՛չ, որովհետեւ ժամանակ չ'ունիմ:

— «Արեւելք»էն քեզ կը ճանչնան:

— Բնաւ:

— Կը խնդրեմ ուրիմ, դիմացի կողմը վերի յարկը ելիւ և հարցուր թէ անցեալ շաբթուան զրկած յօդուածս ի՞նչ պիտի ընեն:

Առիթ մըն էր ասիկա որ ճանչնալու հաճոյքը պիտի տար ինծի այնքան համակրելի թերթի մը խմբագիրը կամ խմբագիրները:

Ներս մտնելուս կը հարցնեմ.

— Կը հաճի՞ք ինծի ըսել թէ այսինչին յօդուածը ի՞նչ եղաւ:

— Հիմա խմբագիր էֆէնտին ճաշելու գընաց. եթէ կ'ուզէք քիչ մը սպասեցէք:

Սպասելով խմբագիր էֆէնտին դարձին, խօսքի բռնուեցայ այդ մարդուկին հետ: Փոխադարձաբար մենք զմեզ իրարու ներկայացուցինք, և այնպէս եղաւ որ այդ վայրկեանէն տեսակ մը մտերմութիւն հաստատուի մեր մէջ, որով ինծի յանձնարարեց այդ թերթին աշխատակցի:

Կէս ժամ ետքը խմբագիր էֆէնտին ինծի կը յանձնէր բարեկամիս յօդուածը, այնպիսի ժպտուն նայուածքով մը՝ որուն մէջ դիւրին էր կարդալ « Խմբագրութիւնը զացած էր փոքրիկ անկիւն մը շնորհել իր պատուական էջերուն մէջ, և հետեւաբար այդ յօդուածը դատապարտուած էր լոյս չտեսնելու ... ի ծնէ կոյրերուն պէս »:

Այդ աշաղուրկ յօդուածը տիրոջ յանձնած պահուս ինծի այնպէս կը թուէր որ խեղճ սղուն ձեռքին մէջ կը դնէի իր գրական յաւակնոտութեան մահազդը:

Գիշերը շատ մտածեցի այդ գրական հրաւերին վրայ, և առտուն ինքզինքս գրագէտ դատայ:

Ինչո՞ւ չըլլայի, քանի որ ամենէն նշանաւոր գրագէտներուն պէս ես ալ ունէի այն

Երեք բաները, որոնք անհրաժեշտ են մեծ ու պղտիկ ամէն զրոյններու :

Դրիչ, մեղան, թուղթ :

Թէեւ առանց ասոնց ալ կարելի է գրագէտ ըլլալ ... քարէտախտակի վրայ գրելով :

Ամբողջ չաբաթ մը, գիշեր ցորեկ աշխատելով առաջին ոտանաւորս գրեցի և չաբաթ առաւու մը տուրի յանձնեցի :

Այդ միջոցին սիրտս ուժգին կը վարնէր. այդ մի եւ նոյն վիճակին մէջ դառնաւ էի այն օրը որ կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով՝ սիրոյ նամակ մը սորդեցուցած էի խարսեաշ աղջկան մը գրպանին մէջ :

— Վաղը պիտի հրատարակենք, ըսին ինծի :

Եւ յիրաւի հետեւեալ օրը ոտանաւորս տպուած էր :

Գրականութիւնը՝ օգիւն և ծխախոտին պէս է. բաւական է որ անգամ մը խմես, ալ ձեռքդ չէ, մոլութիւն մը կը դառնայ :

Ահաւասիկ ինչու համար այդ օրէն ի վեր գրագէտ մը աւելցաւ մեր մէջ, դժբաղդութիւն մը՝ որուն ամբողջ պատասխանատուութիւնը հովանոցիս վրայ կը ծանրանայ :

Ձեզի համար դժբաղդութիւն մըն է ապիկա :

Ես ինքս կը խոստովանիմ. բայց ինծի համար ալ հաւատացէք որ մեծ բարեբաղդութիւն մըն է անոր համար որ շատոնց է յանդանքը ձով և հաշիւը չով գրած չունիմ :

Երբեք գրագէտ մը, ինծի պէս, այսքան նշանաւոր տեղ մը գրաւած չէ ... տառապիւններու աշխարհին մէջ :

* * *

Անշուշտ դիտեցիք թէ վերէն վար գրագէտ անունը տուած եմ ինքզինքիս և կը խնդաք բնականաբար՝ յաւակնոտութեանս վրայ :

Դուք ձեր իրաւունքը ունիք, ես ալ իմս : Բացատրեմ :

Այո՛, ես կրնամ գրագէտ յորջորջուիլ :

Ես բժիշկներէ կը ճանչնամ, որոնք վկայական առած են, հիւանդները աղէկցնելու կարողութիւննին հաստատող : Շատ լաւ :

Բայց այդ բժիշկները — դժբաղդաբար իրենց յաճախորդներուն համար — չէ թէ

հիւանդները կը բժշկեն, այլ ճիշդ հակառակը. առողջները անդամ կը ... հիւանդացանեն (ուրիշ աւելի տխուր բառ մը չգործածելու համար) և սակայն միթէ սօքթոր ըլլալէ կը դադրին :

Ամէն տեղ ընդունուած է թէ բժիշկ մը անպատճառ բժշկելու պէտք չունի՝ Տօքթոր ըլլալու համար : Ատոր պէս ալ անպատճառ գրագէտ ըլլալու պէտք չկայ ... գրագէտ յորջորջուելու համար :

Հիմա իրաւունք կուտար ինծի անշուշտ :

Եւ վերջապէս ինչ է գրականութիւնը : Սոսկ բաղդի խնդիր, նարաի խող :

Մարդիկ կան որ ոտանաւորով մը միայն տիեզերական համբաւ վաստկած են, մինչդեռ ուրիշներ ամբողջ կեանքերնին գրելով անցուցած են, և սակայն ասոնց անունը ոչ ոք լսած է :

Առաջինները գրականութեան մէջ չարուսակ «*show*» նկատողներն են, վերջիններուն գրածները ամբողջ «*կելա*» :


Անդին կարգ մը գրագէտներ եւս կան, որոնց գրուածները բացի իրենց ըլլալէ աւելնուր կրնան ըլլալ :

Ատոնք՝ գրականութեան մէջ զար բռնողներն են :

Ե. ԱԼՓԻՍԷ

ԱՐԵՒԵԼԷ

Օրաթերթ Ազգային, գրական և քաղաքական : — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դր. զաւառներու համար 108 դր. և օտար երկիրներու համար 35 ֆր. : Հասցէ՝ Ղալաթիա, Բամանա տօ փողոց : ԱՐԵՒԵԼԷ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամաւ լուծանալով թեմք, ընտիր յօդուածներով, թարմ լուծանքով ու նորագոյն տեղեկութիւններով :



ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐԸ

ԼԻՒԱՆ ԶՐԴ ՆԻՒՄԵՌՈՅՆ

Փետրվար և պարահանդես, ահա ամսիկ երկու աննման զաւակներ, որոնք տարւոյն այս 28 օրերուն մէջ երբէք իրարու ծծիք չեն ձգեր, և ան աստիճան իրարու հետ սիրով կ'երթան որ վերջապէս կը կռուին, մէյ մըն ալ տաննըմէկ ամիս ետքը հաշտուելու համար:

Բերա պարահանդէսները կեդրոնաւորվին է, թէեւ ուրիշ տեղեր ալ կան մասնաճիւղեր, բայց ասոնց սրահները փոքր ըլլալուն, զայդէ մը տեւի չի կրնար պարել, ասկայն բացառաբար երրորդի մըն ալ կը ներուի ներկայ դասուիլ:

Երկու ոսկիէն բռնէ՝ մինչեւ հինգ զրուշ մուտք ունեցող պարահանդէսներ կան:

Բնական է որ ասոնց մէջ կնիսն որակը և այրերու քանակը եղեւէջներ ունենան անշուշտ:

Երկու ոսկինոց պարահանդէսի մը դացող կին մը՝ երկու երեք հազար ոսկիի ազամանդ կը կրէ վրան, մինչ հինգ զրուշնոցին դացող մը՝ փերեզակէ դնուած վաթսուանոց սլօշ մը:

Նմանապէս այրերը, որ առաջինին մէջ հազար կ'ըլլան առնուազն, մինչ երկրորդին մէջ սարկապէս ստեպղին:

Բախտի խնդիր վերջապէս:

Պարահանդէս դացողներու թիւը մեծաւ մասնութիւն կը կազմէ, բայց հոս ալ դասակարգութիւններ կան:

Այսպէս, պարահանդէս կ'երթան անոնք՝ որոնք բնաւ գացած չըլլալով մէյմը կ'երթան տեսնելու, և երդում կ'ընեն՝ մէյ մըն ալ հոն գտք չկոխելու: Այս դասակարգը կը կազմեն ընդհանրապէս այն գաւառացի միամիտները, որոնք կը կարծեն թէ՝ մէջքէն բռնած կիներնին միշտ իրենցը պիտի մնայ: (Խեղճեր, չեն յիշեր դեռ որ պարի մէջ *changez les dames* ալ կայ):

Երկրորդ՝ այն այրերը որոնք կնիկնուն հետ կուլ ընելով հոն կուգան գտնելու իրենց կորսնցուցածնին, այսինքն կնիկնին:

Երրորդ, այն շարաթականճի միւսիները, որոնք բաթրօնէն տեսնուելու վախը մէկ կողմէն, գիշերը առանճին վերադարձած ատեն

նին յաջորդ առտուան կամուրջին տաննոցը և նիգէլ ժամացոյցը վրայ տալու դողը միւս կողմէն, 10.000 օխանոց բեռը սրտերնուն վրայ կրելով հանդերձ զբացինին տեսնելու համար հոն կը վազեն խլեզները:

Չորրորդ՝ խմբադիրները, մանաւանդ զբաւթ քրոնիկագիրներ, նիւթ մը գտնելով յաջորդ օրը լպրտել, և թերթին ընթերցողներուն քչելով՝ քառորդը հախ ընելու համար:

Կարգը եկաւ կիներուն:

Նախ սկսինք աղջիկներէն:

Նշանուածները՝ հայրիկէն դադուուի:

Անյաճ տարուքնէ մնացած (*conservé*) պէտ հարմացու աղջիկներ՝ զբացինին մանչուն հետ:

Երկանը աֆիոն խմցնելով՝ դուռը վրայ քաշող 4-5 գաւկի տէր կնիկներ, որոնք իրենց հաճոյքը ուրիշներու բազուկներուն մէջ կը փնտռեն:

Երկնին երկու ամիս առաջ մեռած ըլլալուն՝ սեւ սոմբրո հագած կնիկներ, որոնք հոն կը վազեն նոյն տեսակէն միսթարանք մը գտնելու համար:

«Տունը վեր վար ալթիւսթ ըրի (աղջիկս, տղաս, հարսս) չգտայ, աճապա հոս եկած է» մոլտացող ճատրներ:

Շիրտակը զրուցելու համար, այս կիներուն մէջ անանկ դէմքեր կան՝ որոնք ճշմարիտ ֆէմինիստներ են իրաւ որ:

Կիները առեւտուր չեն կրնար ընել կըսենք յաճախ, ո՞վ ըսաւ, անգամ մը պարահանդէս գացէք որ համոզուիք, նինէէս մնացած այդ խօսքին բոլորովին սխալ մը ըլլալուն:

Հոն՝ պարահանդէսին մէջ կիները, անանկ շնորհալի կերպով կամիթ, պաչիկ, նայուածք, *rendez-vous* և այլն կը ծախեն այրերուն, մանաւանդ ոսկերիչներուն մօտ խածնել կուտան:

Եւ անչափ աժան կարապետ են որ մարդուս հաւտալը չիգար, փոխան մէկ յասթիթի, ուղածիկ չափ:

Տեղը չէ՞ գոչելու «պոսովօ առատաճեւոյութիւն»:

Թէեւ այրերու ԱՌՍՍՍՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ, կիներու մօտ մասերուն մօտ մանաւանդ, աւելի նշանաւոր ըլլայ:

Պզտիկ անէքդոտ մըն ալ պատմենք, նախորդ չաբաթ իրիկուան պարահանդէսներու mondeէն և վերջացնենք:

Վիչէն աղա, բնիկ Բանկալթիաբնակ մը, և մեր քիչ մը վերը թուած երկրորդ դասակարգի էսնաֆէն ներկայացուցիչ մը, անցած չաբաթ իրիկուն կնկանը հետ «իկն՞ու չօնուիս չեմք ունենաւ կոր» միջազգային հարցին շուրջ երկար ատեն առնել տալէ ետք, կը քաշուի իր սենեակը, բայց խեղճ մարդը ի զուր անկողնին մէջ ասդին անդին կը դառնայ լայնօրէն, քունը չէր տաներ: (Տիկինը բարկացած ըլլալով, այդ գիշեր վարի պենեակը սեփիւն փռեց կը քնանայ):

Վիչէն աղա, տեսնելով որ ճար չիկայ՝ կ'ելլայ կը հագուի և կը մտածէ, կը մտածէ վերջապէս պարահանդէս երթալու որոշում կուտայ:

Ու կամացուկ մը փողոցի դռնէն սարդելով ինքզինքը ՕՏԷՈՆ կը նետէ:

Սատանան գործ չունի, զինքը իր դրացիին, Տիկին Վիչէնին միւս կէսին՝ Կոմիկ աղային դէմը կը հանէ:

— Օ՛, բարեւ Վիչէն աղա, աս ի՞նչ հով, քուն ալ պալօ կուգա՞ս եղեր:

— Սո՛ւս, ուրկէ ալ դէմս ելար, վաղը գիշեր մերինին բան չըսես, հա՛, Լուցիդան պառկեցուցի (երկու ամիտղջներուն կէսերը) եկայ:

— Վա՛յ, ասանկ հէ՞, ամէրիմ քեզի, աղէկ ըրեր ես, Վիչէն աղա, հա՛ սանկ դուն ալ քիչ մը մարդ եղիր տէ՛, վազ անցիր սա սեփիւն քէօշէն ու լրագիրէն:

Երկու բարեկամներ բաւական մը կը խօսակցին, բայց Վիչէն աղա անծանօթ է ամէն բանի, ուստի Կոմիկ աղա կը խոստանայ իրեն Տամա մը գտնել:

Հիմա հետեւինք Կոմիկ աղային, որ բազմութեան մէջէն սարդելով դուրս կ'ելլէ պարահանդէսէն և կառք մը վարձելով՝ շունչը չիտակ Վիչէն աղային տունը կ'առնէ:

Երկու խօսքով կը բացատրէ եղելութիւնը տիկին Լուցիդային, և կը համոզէ զայն իրեն հետ պարահանդէս գալ, Վիչէն աղային աղաւոր խաղ մը ընելու համար:

Եւ ահա տիկին Լուցիդա, սեւ սօրթիս մը հագած կը տնկուի Վիչէն աղային առջեւ,

մինչ Կոմիկ աղա խնդուքը հաղիւ բռնելով՝ Վիչէն աղային ականջն ի վար,

— «Քեզի բերած տամաս է» կ'ըսէ:

Վիչէն աղա շուտ մը կը դարձուի կնկան, մանաւանդ պոյին պոյին և գիշութեանը:

Պարահանդէսին մէջ Տամ գալալիէ ի՞նչ կը խօսին իրարու հետ, անպատճառ ի՞նչպէս հոն գալերնին:

— Ի՞նչպէս եկաք, նայինք, կը հարցնէ տիկինը:

Վիչէն աղա, կարծելով որ բարեկամը եղածը պատմած է տիկնոջ, կը խոստովանի:

— Աս ի՞նչ չաշխուրհ կընիկ ունիք եղեր:

— Սուս եղիր, բէկ հնալի է, բիւտէն ալ քիչ մը շատկէկ կերաւ տէ, սէտիրին քէօշէն քաշուելուն պէս սխաւ խըս խըս քքնանալ:

— Ո՛ւֆ, ատ ի՞նչ կընիկ, իրաւ որ ես երկամարդ ըլլայինէ ծով կը նետուէի տէ տանկին հետ չէի պտակուեր:

— Սուս եղիր, բերանդ սիրածս, ծով նետուելէն տահա գէշը ըրի ես, իր ծոցը նետուեցայ, ինչ է նէ, աղէկ որ քեզի կտայ տէ քիչ մը կը ֆէրահնամ կոր, էյ ըսէ նայինք, դուն ինտոր եղաւ տէ հոս եկար, մօթ է հարցնելս ամա, կարգած ես:

— Եա՛, ասկէ տասը տարի առաջ:

— Թըբիւր ինծի պէս, ես ալ ասկէ տասը տարի առաջ, Անճարակին երկուշաբթին կարգուեցայ:

— Ես ալ անանկ, բռնեցին իս միսկին, ուղուրսըզ մարդուն մէկուն տուին, քէօշէ սարաֆիի մը:

— Ամա աֆ կ'ընես, ես ալ սարաֆ եմ:

— Ինչ կ'ըլլայ, սարաֆներուն քիպարը չըլլա՞ր մի, ֆարազս հրամանքնիդ, իմինս ուղուրսուղներուն ուղուրսուղն է, սաղլըթ սէլամէթով դէմը չեղէի, ամէն գիշեր ինչու չօճուիս չունինք տէյի կռիւ բաթըրտը, քեզի ըսէ մարդ:

— Ա՛խ, ատ պէլան իմ կլոխս ալ կայ, նոնօշ:

— Իրաւ կ'ըսես, չերկնցունեմ, աս դէշեր նայեցայ քի ըլլալիք բան չէ, կէսէ կըռիւ բաթըրթը, կամացուկ մը ականջիս բռնութենէն ըւսախին խատէխին մէջը լեցուցի, ինքզինքէն պէխապար հիմա կը քնանայ կոր:

աս իդանը հօրմէս սորվեր էի, լուսահոգիին ոսկի սահաթը իւրն քօրտօնը ատանկով աւարթմիշ ըրեր էին գիշեր մը:

— Չըսես քի իրարու բէկ ուշմիշ եղանք տէյի, իմ կընկեր շաշխըն, քու էրիկդ հայւ վան, կէլ քէֆիմ կէլ, փաթմա մը կուտն:

— Ձէ մէրսի, իշթան հունիմ, փիլաւ կերայ աէ կո կուգայ Կոր:

— Ես ալ փիլաւ կերայ տմա շատ չկերայ: Հին լարեկամներ կը դառնան իրարու, և այդ զիշեր վիշէն աղա մեծ դժուարութիւն կը քաշէ տամային յետախոյժը պաշտպանելու համար, ինքնաւար մասներէ:

Սանկ նանկ զիշերուն մամը Զ-Գ կուգայ, և վիշէն աղային ալ քունը գալով՝ կ'ուզէ հրաժեշտ առնել և մեկնիլ: Չմոռնանք ըսել որ, արդէն խմուած պիւրաներն ալ սկըսած էին կամաց կամաց զլիւտն զարնելով աչքերը չտեսնել այլեւս:

Բայց պարտաւ տեղը կ'աշխատի, տաման թիւէն կախուած՝ անպատճառ իր տունը տանիլ կ'ուզէ զայն:

(Աս տունն տանիլը պարահանդէսներու վերջին տեսարանն է, ուրկէ ետք լսյոներ կը մարին):

— Չըլլար խուշս, տեղս հեռու է, տիյօր Բանկալթի պիտի երթամ ետքը:

— Ես ալ Բանկալթի կը նստիմ զաթէն, մեղի կուգաս, տունին բալլիքը քովս է, կամացուկ մը ներս կը մանանք, ու վարի օտան մէյմէկ խահուէ կը խմենք:

Չըլլար-մըլլարներէ ետք, վերջապէս կը համողուի վիշէն աղա:

Տաման առանց վիշէն աղային հարցնելու կառք մը կը կանչէ և կառապանին հասցէն կուտայ:

Կառքը իր տեղը կը հասնի, տաման մուծին մէջ խորխորակով՝ դուռը կը բանայ, և երկուքը մէկ ներս կը մանեն:

Դրան ետեւը դրուած լամպարը կը վառէ և վիշէն աղային թիւէն քաշելով, որուն աչքերը ալ ամէն բան զոյգ և կլոր սխառ էին տեսնել, սենեակ կը բերէ:

Վիշէն աղա կը սկսի քիչ քիչ ուշաբերիլ:

— Ուլա՛ն, պու օտա պիղիմքինէ պէնդէյօր, թօհաֆ շէյ, ես չու սահաթ, շու սէտիր, իշաէ տօլապ, նա՛, նա՛ լապուճլա-

րմ, պուճլար պէնիմ տիր, վա՛յ շէյթան գարը, աճապա պիղիմ էվէ կէթիրտի պէնի, աման գարըմ տույմասըն, դըյամէթի դօքսրըր, մատա՛մ, մատա՛մ, պու օյուն նէ՛, նէ՛, սէօյլէ:

— Շաշաճագ պիր շէյ եօգ, պու էվ սէնին էվին տիր, պու բապուճլար սէնինքիլէր տիր:

— Էյ սէ՛ն, նասըլ ...

— Պէնտէ սէնին գարընըմ ...

— Հէ՛ . . .

Ու կը քաշէ կը հանէ մասքէն երեսէն, որ տաքութենէն կաս կարմիր կտրած և քըրտինքներու մէջ մնացած է:

Մեղ կը հուսատեն որ ութը օրէ իրարու հետ չեն խօսիր կոր եղեր, բայց կոմիկ աղա մտադիր է մանչ մը ունենալ:

Աստուած յաջողէ:

Բերա

ԱՆԿՈՒՏ ԳԻՇԵՐՈՒԿ

BAL SURPRISE

Ինչպէս մեր նախորդ թիւով ծանուցինք, յառաջիկայ կիրակի գիշեր, Բերա, Բըթի-Շան Բասաժ, Սօչիէթա Օբէրայա Իթալիանայի սրահին մէջ տեղի պիտի ունենայ ընթացեկան և անդիմալ պարահանդէս մը, «Պալ սիւրըրիզ»: Այս փալուն երեկոյթը պիտի արդարացընէ իր անունը արուեստական ճշմարիտ անակնկալներով: Պարերը պիտի վարէ ծանօթ մասնագէտ-ուսուցիչ Խաչիկ Էֆէնտի Խաչատուրեան, ինչ որ լաւագոյն հաւաստիք մըն է պարահանդէսին մասնադիտան յաջողութեան:

Ամէն կերպով հաճելի և եղանակին յաջողած պարահանդէսներէն մին պիտի ըլլայ: Կ'արժէ մանաւանդ քաջալերել Խաչատուրեան Էֆէնտիի պէս հայ արուեստաշէտ մը:

Տոմարկին զինն է քառորդ ոսկի մը, մէկ քալալէի և մէկ տամի համար:



ԹԱՏՐՈՆ ՎԱՐԻԷԹԷ

Ի ԲԵՐԱ

Կիրակի ցերեկ, 25 Փետր.
ժամը 8ին

ՔՐԲՋԱԼԻ ՑԵՐԵԿՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ

ՇՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՑԵՆԱՆԻ

[ԿԱՎՈՐՇ]

Ֆրուսր Բլաս Վոսիլի

ՊՈՒԱԺՕԼԻԻՆ

ԶՈՅԳ ՄԸ ՆՇԱՆԱԾՆԵՐԸ

3 վարապոյր

ԻՐԻՎԸ ՆԵ ԿՆԻՎԸ

Կատակախաղ 1 արար

Տեր ԷՆ Տիկին ՊԻՆԿԻՄԵՆԵԱՆ-
ՆԵՐՈՒ ԿՈՂՄԱՆԵ



ՀԱՅՐ ՄՆԱԿԵԱՆ ԵՒ ԻՐ

ԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԱՆԵ

Թաղի քաղի ներկայացանալի
Զոյգ մը զաւեշներ խիստ հիանալի

Մեր սիրուած միմիք, էքսիվէն քօմիք, անուշով ԿԱՎՈՐՇ, գրպանը միշտ սօշ, դե-
րասան տիպար, ընդթով քիպար, որ «ՄԱՆԶՈՒՄԵԻ ԹԵՐԹԸ ԿՈՂԷԻ», կ'ըսես այն օրն որ,
բան զրած է նոր՝ սո մեր ԿԱՎՈՐՇ, գրական րօշօք, զոր միշտ կը կարդաս և թէ կը խըն-
դաս, տնա այս անդամ, ըսէ «աման գամ», վայելել մօտէն միմօսն մեր մօնաէն, հոն վա-
ռիէթէ, զի վարիէթ է խնդալն ի սրտէ: Կիրակի ցերեկ, ընկերովն ձեր էք, վաղեցեք հոն
ուր, Հայ-Վայֆն ընդհանուր, պիտ' գտնէք բաղմած, ի չարս խիստ բաղմաց, օթեակներու
մէջ, խիստով մը անշէջ: Դուք որ կը կարդաք, յօգուածներն տաք տաք, չպիտի կամիք,
Կալոսչին քօմիք, սատարել ասով ու վանել մեծ սով, զոր ունի տոէսլ քսակին հան-
դէսլ . . . :

Ուրեմն Կիրակի, ինչպէս կրակի, վաղեցեք զացեք, տոմսով գնեցեք, թող ցնծայ Թօլա,
այլ հւս չիլայ, իրը անկուտի, և կարօտ զուրթի:

L . . .

ԼՈՒՐԵՐՈՒ ՏՐՑԱԿ

ԱՐՁԱԿ ՀԱՄԱՐՁԱԿ

Զգելով երբեմն փեշերն կիներուն նիհար կամ մքունս ,
 Զուարթ բռնիկներ՝ հոգ չէ քե քիչ մը իրաւ , քիչ մը սուս ,
 Պիտ՝ զրեմ այսպէս յանգեցուցաւ նոյն — անհասնում գանձեր ! —
 Որոնք մերք բնդ մերք արդուկեն պիտի գլուխներ՝ գանձ՝ ձեր :
 Այս տեղ պարկած օրուան լուրերը լուրջ կամ արտառոց ,
 Գործերը բոլոր մեղաւորներուն եւ քե՛ արդարոց . . .
 — Տակաւին չըսած կարծեմ քե միտս հասկնալ կրցա՞մ —
 Ժողովելով պիտի կազմեմ Ֆանթեզի շուրերն *սրցալ* . . . :

* * *

Հրեշտակապետի կրթական գործը այսօր կը բուխ՝ ,
 Զի հոն Վարչութիւն , Թաղական Խորհուրդ չեն գար *թըր* ,
 Որոնք համեմատ , ձեռնհասութեամբ անմահ , խորին
 Գիշեր ու ցորեկ լրջօրէն գործին վրայ կը խորհին :
 Արդի վարիչը , Գրիգոր Սիւքեր , պատշտօնին աւակ ,
 Որ բնականէն կը սիրէ քիչ մը սանկ անմեղ կասակ ,
 Գծած է որո՞ւ , հաստատ ամենուն « պարտի-պահանջ » ն ,
 Որպէս զի շուտով ապիկարները ինքնին նահանջեն . . . :
 Իսկ փոխ-վարիչը — ձեր խոնարհ ծառան , ինք համակ-հոգի !
 Հսկէ աշալուրջ , վազելով հոս հոն նման մագոգի . . .
 Միայն քե պէտք է որ տարուքեան չենթարկուի բոքի
 Պատ. Թաղ. Խորհուրդը կերցնէ իրեն միշտ կար , սեր , կոգի . . . !!!

* * *

Կարգուելու խենդ շատ մը աղջիկներ , որ Սուրբ Սարգիսէն
 Խնդրած էին որ ուրիշ մը հետ . . . անկողնին կիսեն ,
 Ու ազատօրէն սիրոյ դատէին մեջ երբան հարակին
 Դեռ յոյսով լեցուն կըստասեն անձկաւ գալ *անհարակին* . . . :

* * *

Սոյց աղբիւրէ կ'իմանանք որ սա Բարեկենդանին ,
 Յոյց տալու համար ապացոյցներուն մեծն ու կենդանին
 Թէ իրենք ոչ քե լոկ շահու համար կամ վասն վառաց
 Այլ անկեղծօրէն կրթական գործին սիրով են փարած !
 — Հսկ'ի , արտառոց ու ծիծաղաւարտ ա՛լ կա՞յ բան մ'ասկէ —
 Ուսուցիչները Կ. քաղի խումբով պիտ' ըլլան *մասի* ,
 Ու պարտելով հոս հոն ձեւերովն իրենց հրապիտ
 Դպրոցին հաշուոյն ժողովին կլորիկ գումար մը պիտի . . . :

* * *

« Սինկեր » ք հոս ալ զգալով պէտքն ու օգուտը կարի
 Բացաւ ընդարձակ արհեստանոց մը ձեւի ու կարի ,
 Ըլլալով այսպէս մեր աղջիկներուն ձեւ *մեկնաւ* ,
 « Միայն քե , կ'ըսէ , պէտք է որ դուք ալ գնեք մեկնաւ . . . » :

ԽՐԱՏՆԵՐ ՆԵՐՀՈՒՆ՝

ՄԵՐ ԱՂԶԻԿՆԵՐՈՒՆ

Փափազեան մականունս արդարացնող գէթ փառաւոր մօրուք մը ունենայի . . . , բայց քաջ գիտնալով որ միայն մեր տէրպապաներուն տրուած չէ ժողովուրդին բարոյական և հոգեւորական հովուութիւնը, ուստի ես ալ իբր աշխարհական հովիւ, փոխանակ ցուպի, գրիչս ձեռք կ'առնեմ, իմ երկսեռ երիտասարդ բարեկամներուս թուելու այն կարեւոր խրատականները՝ որոնց գիտեմ թէ պէտք պիտի ունենան Բարեկենդանի սա եռուղեւ շաքաթներուն մէջ :

Ամէն բանին էքօնմին յարգելի է կ'ըսեն : Եթէ քահանաները խոստովանցելու և կամ տունօրհնանքի համար առնուազն ձեր մէկ մէծիւր կը չորթեն, ես մեղաւորս ձեր մինչև նիկ քառասունոցով կարելի է անոնցմէ ա'լ աւելի չինիչ խրատներ պիտի տամ հոս, յուսալով որ եթէ մեծ պահքը չէք բռներ, գէթ այս յորդորներս կը բռնէք ի սէր մարդկութեան, ի սէր ձեր ֆիզիքական եւ . . . պատիւ ձեր բարոյականին :

1. — Բարեկենդան է, ինչ որ ընեմ ներեալ է ըսելով ինքզինքնիդ լեմոնի կեղևի պէս հոսանքին մի տաք :

2. — Դիմակաւոր պարահանդէսներու մէջ ամէն «եւ քեզի կը ճանչնամ» ըսող քավալիէին ետեւէն մի երթաք, սաղայելին մանչիկները ոսկիին հանքերը աւելի լաւ գիտեն, քան թէ ձեր մահալէ առասիի չորս օտալը տունը :

3. — Պարեցէք մինչեւ որ յոգնիք, սակայն երբ ծնգուըններնիդ ելմասիէի պէս դաշալ սկսին՝ տիտիկ ըրէք, եւ ոչ թէ ուրիշ անկաժրման մը . . . մտրկ :

4. — Պարած ատեննիդ, դուք՝ աղնիւքոյրերս, ձեզի է խօսքս, ինքզինքնիդ ծովի պանեօն մի գիտնաք ու մի նետուիք ձեր ամբողջ մարմնով քավալիէին բազուկներուն մէջ, այդ փոթորկայոյդ ծով-սիրտին տակ skochuk չկայ, այլ . . . անդունդ :

5. — Ձեր ձեռքը իրենին մէջ սեղմող երիտասարդին գործքով մի պատասխանէք, այլ նոյն պահուն համարեցէք թէ թէրս խոթուած ասեղներու բարձիկ մը կը բռնէք կոր . . . ցաւը ետքէն զգալու տեղ՝ առաջ արթննալը խեղացութիւն է :

6. — Նախը արեցէք պարերու մէջ քասոսիլը, քան քուռանքները ձեր խելքն ու սիրտը տակն ու վրայ կ'ընեն, և պէտք է գիտնաք որ երիտասարդի մը սիրտ խառնըշտկիլը, պղտիկ պէպէքի մը կարեւորագոյն էլէն քրքրելուն չի նմանիր :

7. — Երեկոյթի մէջ կատարեալ լրջութիւն ալ մ'ունենաք, լիթե է կ'ըսեն, հովի պէս ալ չէ, ետպսիդ կ'ըսեն :

8. — Եթէ պարելու միտք ունիք, պէտք է որ ամենուն հրաւէրը չի մերժէք, երեկոյթի մը մէջ գտնուած երիտասարդները, բօթուգալի քիւֆէէն զատուուն չի նմանիր :

9. — Միշտ յարգանքով վարուեցէք այն տիկնոջը հետ՝ որուն . . . տղուն հաւնած էք, և անոր հետ խաղացած ատեննիդ՝ արթէր Արթինին ետքին պէս մի փակչիք որ «անտեղուանքը չէ» ըսել տաք մօրը :

10. — Գտնուած տեղեր իդ նստեցէք, շատ արթու կամ ֆօքսոյ մի փոխէք, նեղ սիրտ է, աուր օթուր չունի կ'ըսեն :

11. — Նստած տեղերնիդ նայեցէք որ հայելիի դէմ չի նաք ու մէջը շատ չի նայիք, թեթեւ է, սիւսի մէնաքըլը է ըսելով չեն համարձակիր զձեզ քանիսաք ընտրելու :

12. — Աթոռի մը վրայ երբ գտնուիք, ճիւղերնիդ մի տնկէք, և Հօմ-Սքուլի աղջիկներուն պէս ծունդ ծունդի վրայ մի նստիք, որովհետեւ երեկոյթ ըսուած տեղը զբօսովայր մը չէ :

13. — Երիտասարդ մը տանսի համար բռնի զձեզ անկաժէ ընել տալու համար սը-

Ներքին պէս աչքերնիդ վրան մի պաղեցնէք, աւելի լաւ է վար նայիլ՝ գորգին վրայի ծաղիկները համրել՝ քան թէ քաղաքիէն գլուխուն և պիտերուն մազին թելերը:

14. — Ձեր մօտը նստող ընկերուհիին հետ հա հա հի հի մի տեսակցիք, սալոն ըսուածը քըռք չէշմէին բաղնիքը չէ, եթէ ոչ գրամօթիտով գէթ կրթութեամբ ծանր եղէք:

15. — Ձեզ հետ խօսող երիտասարդին տասը խօսքին մէկ «այո» մը բաւական է:

16. — Ամէն անգամ երբ խնդալու հարկին մէջ գտնուիք, ձեր հոտաւէտ թաշկինակով ծածկեցէք ձեր բերանը ... եթէ նոյն խի իրական ալ ըլլան ձեր ակումները, այնքան կեղծեր կան՝ որ ձերիններն ալ անոնց տեղը կը դրուին:

17. — Պարի ժամանակ եթէ քաղաքէն սիրոյ տուրակէն խօսք մը նետէ, քառչուէ գնտակ խաղալու պէս մի նետուիք ու յափշտակէք զայն, այլ ձգեցէք որ մէկ երկու աստուծ ընէ ան, ու հանդարտելուն՝ եթէ գեղեցիկ և գործածական գտնաք ... ընդունեցէք:

18. — Երբ երեկոյթի մը երթալ հարկ ըլլայ, ջանացէք կարելի եղածին չափ պարզ թուալէթ մը ընել, հակառակ պարագային ձեր բնական գեղեցկութեան եթէ հաւնող խի ըլլայ՝ իսրաֆելի է ըսելով չին համարձակիր ձեր աջ ձեռքը, ոչ ալ քսակը խընդրել:

19. — Ձեր պուզներուն մէջ բաշավուածի Մուշոնին նախանձը գրգռելու չափ քուրջեր մի թխէք ... օրական տասը քաշ կաթ տուող կովերը յարգի են թէեւ, բայց չեմ կարծեր որ ...

20. — Նախընտրեցէք զրացիին անուան գտնուիլ ու կէս գիշերին տուն դառնալ, քան թէ պալ բիւլլիֆ մը երթալ և լուսցընել: Առաջինին մէջ ձեր պարտքը կատարած կ'ըլլաք, խի երկրորդին ... պատրանքը:

21. — Երբ քաղաքէ մը դայ զձեզ անկաժէ ընելու, տաք երկաթի վրայ նստածի պէս վեր մի ցատկէք, չնորհալիութիւնը և ծանրութիւնը ձեր սեւուլիկ աչուկներուն վրայ շատ բան կ'աւելցնեն:

22. — Երեկոյթի մէջ՝ մի ջանաք օտար լեզու, կամ խօսակցութեան մէջ օտար բառեր գործածել, որովհետեւ օրուան կէսուրցունը կ'ուզեն որ իրենց հարսերը գիտակ ըլլան սիւփիւրկէին աւելին, քան թէ մաքուր հայերէնին աւելին:

23. — Զգուշացէք և մի ձգէք որ քաղաքէները իրենց քաքը ձեր պուզին կռնակին փակցնեն քրտնած քրտնած, որպէս զի թռանվայի ձերուն պէս ձեր կռնակին վրայ... հետք չի ձգեն:

24. — Պարած ատենիդ մի ցատկուտէք, քէսկին կրակի վրայ նետուած սխտի պէս, ձմեռուկին թելիւնը կը նախընտրեն, բայց ձեր մէջէն տեղէն չի վերջուողը աւելի յարգի է:

25. — Գուպաներնիդ լաւ վեր քաշեցէք և նայեցէք որ ժառքիեռնիդ նոր և ումուր ըլլան, որովհետեւ ատոնց Գեկլիթին հետեւանօք, ամէն սալօ ի տակ գերեզմաններ բացուած չեն ըլլար որ մէջը նետուիք, խախտութեան պատրանքը փաթթուած:

26. — Եթէ դաշնակ գիտէք և եթէ զձեզ հրաւիրեն որ զարնէք, չփացածութեան և չըթ գըռըտըմ ձեւարանութիւններ պէտք չէ որ ընէք, չեմ ըսեր որ եւրոպական կըրթութիւնը ու սըրըխութիւնը գործադրէք, սակայն գէթ այս պարագային հայու աղջիկ մ'ըլլաք:

27. — Նստած ատենիդ եղունքնիդ մի կրծէք, ոչ ալ ձենէ լաւ թուալէթ ընողին... միտը:

28. — Եթէ մէկը զձեզ պարի ատեն ձեռքով շոյելէ վերջ լեզուաւ ալ շոյել ուզէ ու ըսէ թէ «Օրիորդ հիշանալի կը պարէք», գիտցէք որ այդ խօսքը այն ապուխտի կտորին կը նմանի, որուն համար խեղճ մուկերը թակարդը կ'իյնան ... զգուշացէք:

29. — Եթէ մասքեով և տօմինոյով ինքզինքնիդ ծածկած տեղ մը գտնուիք «չեմ ճանցուիր» ըսելով պատուտած ու սկրթած ձեւեր մի առնէք երեկոյթի մէջ, աչքեր կան որոնք ուշոյթիկէնեան ճառագայթներու պէս ոչ թէ ձեր խիւղիթիւնը՝ այլ ձեր բարոյականին կը թափանցեն:

30. — Ինձի մարդ չի նայիր կոր ըսելով քիթերնիդ մի խառնէք, անակնկալաբար զձեզ դիտող մը կարելի է մօտենայ ձեզ և ըսէ «Օրհորդ արդեօք ըսն մը կորսնցուցիք...»:

31. — Երեկոյթի մը մէջ գանուած առանձնիդ, եթէ նոյն իսկ բիրենբըր ծակ ծակ ընեն ձեր մարմինը, պառչած չէ որ բէշերնիդ վեր առնէք ու որսորդութեան ելլաք, և կամ վրայէն քերուածիք, քերուածութեան գաղանիքներ դուրս կուտայ ձեր ներքին խմորէն:

32. — Պարահանդէսներու մէջ նայեցէք որ անոր ասոր թաթին տակ չիցնաք, երկուստաբարդներ կան որ կատուներու կը նմանին, ձեռք անցուցած որսերնուն հետ առաջ կը խաղան ետքը կ'զգանան:

33. — Եթէ եղբայր ունիք հետերնիդ ու երեկոյթի մը մէջ գանուէք միասին, ինքզինքնիդ տամա թաշիի պէս մէջտեղը մի ձգէք, «քրոջ ծուծը հանեցինք» ըսել չի սայու համար դուք... կռնակէն:

34. — Մի մոռնաք ձեր վրայ կրկու փոքրիկ չի մը եխթե, ատեն ատեն քողուտուելու համար, առանց ատոր ձեր քալու լիէները կրնայ ըլլալ որ փռնքաւան քրտինքի սուր և կծու հոտէն:

35. — Եթէ սալօնին մէջ մէկը ձեր աչքին զարնէ ու ձեր սիրտն ալ զարնուի ստոր, ջանացէք որ կռահել չտաք անոր այդ պարզան: Աւելի աղէկ է ի ներքուստ հալիլ քան թէ վրաձգողութիւն յայտնել:

36. — Pour mot de la fin պէտք է ըսեմ որ, եթէ կենցաղագիտութիւն ըսուած բանը չունիք, սիրելի քոյրերս, աւելի լաւ կ'ընէք երբ ձեր անկողնին մէջ վերմակին փաթթուէք, քան թէ հանրութեան մէջ երիտասարդներու: Գիտցէք որ օրուան երիտասարդներու համար սպօն և երեկոյթ փորձաքարիւր են՝ ուր զձեզ կը փորձեն, աջ ու ձախ կը դառցնեն, կը վայելեն ու սիկառի մը մնացորդին պէս մէկ կողմ կը նետեն ուրիշ մը վառելու համար: Դուք ելեքքորական բուսաններուն մէջի թելերուն պէս եղէք, ի պահանջել հարկին փայլեցիք ու ձեր վառցիքերուն մէջ թող ուրիշներու աչքերը չըմարին, ըսյց... Եթէ կենցաղագիտութիւն գիտէք որ թարգմանի... խուռնագութիւն:

ԼԻՒԱ

ԳՐԱԿԱՆ ՊՅԱԿ

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՐԲ

ԵՒ

ՊԱՀԱՆ ՔՈՇԻԿԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱՅԱՆ

Երկուստեք Ռեայի Ս. Երոզդուրիւն եկեղեցին կատարուեցաւ մեր Ազնուունի պատգամակից Մադիկ կանանց հանգեսին խմբագրութեան հանդէսը, հախագրութեամբ Տ. Հմայեակ եւ Գեորգ Սրբազաններու, եւ ի ներկայութեան բազմաթիւ վարդապետներու, եւ երկուստեք սաներեց Բանաններուն:

Եկեղեցին ամբողջովին լուսաւարդուած էր ու հարսնետոհմերու ընտել երկսեռ բազմութիւն մը ամբողջ սանաւր գրաւած:

Պատիկ Ս. Խորհուրդէն վերջ նորապսակ ամուր վայելուչ քափօրով մը առաջնորդուեցաւ Յ. Խումարեան եֆեսիի Արուեստանոցին տնօրէն, նոյապէս կանաւորուած ու զարդարուած, ուր ներկայ իրենց խնդակցութիւնները եւ մարքանքները շուայեցին հարսին, փեսին եւ պարագաներուն: Խախտանութիւնք տեսցին մինչեւ ուստ ասեն պարտով, գուար ֆօզդոններով եւ տեսակ տեսակ մեծարանքներով:

Խմբագրութիւնս պարտ անձին կը համարի իր ջերմ շնորհաւորութիւնները ու մարքանքները հասցնել նորապսակ ամուրին, նախ քան պատգամակից, երկրորդ, քան երախագիտութիւն այն տեսական աշխատակցութեան ու մասնակցութեան համար զոր չեն զլացած քերթիս հանդէպ նախ քան Մադիկի հրատարակութիւն, ուր երկու սիրուած գրչներն ալ՝ առանց ո' եւ եւ ակնկալութեան, լոկ արուեստին սիրոյն բերած են իրենց ազնիւ մասնակցութիւնը, ալ աւելի փայլ մը տալով իրենց սիրուած անուններով՝ այն տարիներու իրերուն մէջ, ուր անմոռաց յիշատակ մը ձգած են եւ զորս Ս. Պատիկը գիտար կապեց

ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՐԲ

ԵՒ

ՊԱՀԱՆ ՔՈՇԻԿԵԱՆ

ԲԵՐԱՅԻ ՄԷՋ ...

Հետևողութեամբ Լ.Ա.Ա.Ա.

Դեկտեմբեր, Յունվար, Փետրվար ...

Ահա երեք ամիսներ՝ որոնք զուարճասէր երիտասարդներուն համար շատ բան կ'արժեն:

Ի՞նչ անուշ ամիսներ են ասոնք ... ուր երիտասարդի մը արիւնը իր է՛ն տաք շրջանը կ'ընէ և սիրտը իր է՛ն բաբախուն վայրկեանները կ'ունենայ ...:

Տարուան այս երեք ամիսները որոնք սուառեի, քաղցրալի և պարահանդեսներու ամիսներ կը կոչուին, այժման հրապոյր ունին երիտասարդի մը համար, որչափ աղջիկ մը՝ իր էլա աչքերովը:

Այս եղանակին մէջ, տաք սենեակին անկիւնը անգամ մտող երիտասարդութիւնը աչքը յառած է դէպ ի բերա՝ ուր չեն պակիր զուարճութեան ալլապանութիւններ:

Կիրակի առաւօտ մը, արշալոյսին բերա գտնուեցէք դէպ ի պալօներու կողմը, պիտի հանդիպիք օձիքնին դարձուցած, թօշնած ու դեղնած, վրանին գլուխին ֆոնֆերքիներու մէջ՝ զառնալիլ զօգօղլար՝ երիտասարդներու, որոնք հովի մը մեղմ սոյլին պէս կ'անցնին կ'երթան ձեր մօտէն:

Անոնք գիշերը մինչև լոյս ցատկուտելով լեզուներն դուրս ինկած միւսիւններ են, որոնք ընդհանրապէս արհեստաւորներու զաւակներ, չըջանաւարտ աղուամաղաններ չարաթը 25 դրուշ առնող դեղադարձի աշկերտներ և վաճառականի գրադիրներ են:

* * *

Եթէ ժամանակ ունիք նկարագրենք ասանցիկ հաս մը:

Ուրբաթ գիշեր ժամը երկուքն է, դուռը կը դարնուի, տան պիտը՝ Գէորգ աղան ձեռքը երկու հայ բռնած՝ սենեակէն ներս կը մտնէ.

— Բարի լինիւն.

— Ասծու բարին.

— Հայկունէին ո՞ւր է.

— Թէյէիս աղջիկը եկաւ տարաւ, վաղը գիշեր սուառե ունին եղեր տէ ...

— Էյի ամա պէնտէն իզին ալմատան նաւը պրադընօրն.

— Ճանըմ նէ օլուր, ճահիլ զըզ տըր, վարսըն օտա պուլունըն.

— Նէ վաղըթ կէլէճէք.

— Բազար էրթէսի.

— Օ՛իս պապամ. նէ իսէ, հայտէ սուֆրայը դօտա ելմէք ելէլիւմ:

Ճաշը կ'ուտենու ժամ մը վերջը կը քնանան:

Շաբաթ գիշեր է. Գէորգ աղայի միծ աղան Հայկ խօսք առնելով.

— Հայրիկ, քեզի բան մը պիտի ըսեմ, կ'ընեն աճապ ...

— Ի՞նչ է, ըլլալիք բան է նէ ինչո՞ւ չընեմ.

— Աս գիշեր թող կուտամ քի քիչ մը պտըտիւմ.

— Չէ, չըլլար, Հայկունէին հոս չէ, դուն ալ երթաւ նէ ի՞նչ կ'ըլլայ, մէկէնուղ մէկը հոս գտնուելու էք.

— Գուցում հայրիկ ի՞նչ կ'ըլլայ, սանդերկու սահաթ կը պտըտիւմ կուգամ.

— Տղա ցուրտ է, պտըտիւմ ըսելնիքէն կը հիւընդնաս, էս հէքիմի բարա սալու ժամանակ չունիւմ.

— Աման հայրիկ չեմ մըսիր.

— Շուտ գալու է ամա.

— Բէք ալէկ, բէք ալէկ ըսելով ռքսկէկօր կ'ունակը կ'անցունէ, ալ պէնի գաւալութը ճիտին, կլատէ պօթիքը հաղնելով դուրս կ'իլլայ դուռնէն ու թրամիլայ մը նստելով կը հասնի հոն՝ ուր կը գտնուի քոտակներու միքրոպ Օսեօնի համբաւաւոր չէնքը:

Տասը դրուշը ցնծալով ներս կը մտնէ պալօնն ու ճիշդ ժամանակին հասած ըլլալով քաւսիլ խաղալու համար տալա մը կ'որոսայ:

Դադարի ժամանակ քիչ մը օդ առնելու համար քաման թեւը տաւած դուրս կ'ելլէ ու գիմացի մահալլէպիճիէն ներս մտնալով.

— Մատաղէլ, ֆրանսըղճա սիլիլ րաիլիլ.

— Էվլէթ, մէսիէօ, էրմէնիճէտէ պիլիլիւմ.

— Բէք էյի.

— Նէ պուլուրընընըլ.

— Պիւր քիլօնա.

— Բը՛շտ, պանա պագ, էքի թանէ թրի-
ղօնա կէթիր.

— Ատընդը գապիլ տի՛ր աննամագ.

— Վերժին.

— Օ՛խ, օրիորդ, ի՛նչ ալ աղւոր անուն.

— Ո՛ւր կը նստիք.

— Ձեր մօտերը.

— Մեր մօտերը, սակայն իմ ուր նստիլս
ի՛նչն զիտես, երկրորդ մեր փողոցը Վեր-
ժին անուամբ աղջիկ չիկայ կարծեմ ...

— Մտածես նէ կը գտնաս ...

— Ժամացոյցը նայելով՝ օ՛ օ՛ օ՛, եր-
թանք, հիմա պարը կը սկսին.

— Հայտէ երթանք ըսելով ոտքի կ'ելլեն
ու հայտէ նորէն պալօ, անշուշտ թռիղօնա-
ները լափիղելէ ետք:

Վերջապէս մինչև առտու վեց եօթը ան-
գամ պալօէն մահալէպիճիին և հոնկէ ալ
պալօ կը մանեն ու կ'ելլեն:

— Օրիորդ Վերժին, արդեօք կարելի է
անգամ մը ձեր դէմքը տեսնել.

— Ա՛հ, դժուարինս խնդրեցիր.

— Ինչո՛ւ օրիորդ, ի՛նչ կ'ըլլայ. երկու
վայրկեան բացէք և վերջը նորէն գոցեցէք.

— Ի՛նչ պիտի ընես.

— Մէյ մը տեսնամ, որովհետեւ թէ ձայ-
նըդ և թէ իմ ուր բնակիլս գիտնալդ հե-
տաքրքրութիւն պատճառեցին.

— Ոչ, պարոն, ոչ, ձեր ո՛ւր բնակիլէն
ամենեւին տեղեկութիւն չունիմ, անանկ բան
մըն է ըսի.

— Թող ըլլայ, անգամ մը գոնէ դէմքդ
տեսած ըլլամ.

— Ահաւասիկ, պարոն ըսելով քաման
վար կ'առնէ դիմակը ու ինքզինքը կը յայտ-
նէ, որ էր Հայկուհին, մեր նիւթին հերոսը
եղող Հայկին քոյրը ...:

Բերա

ՍԵՊՈՒՀ Մ. ԱԿՈՒՆԻ

ԿԱՐԵՒՈՐ

Գաւառներէն և թէ հոսկէ ջերմապէս կը
փնտռեն մեր ԿԱՂԱՆԴԻ ԲԱՅԱՌԻԿ ԹԻՒՐԸ,
և կը հարցնեն թէ՛ ո՛ւր կրնայ գտնուիլ: Առ-
այս կը ծանուցանենք թէ մեր Բացառիկ քիւր
կրնան ունենալ ամէն անոնք՝ որոնք կը գի-
տն ուղղակի ՊԱԼԵՆՅ ԴՐԱՏՈՒՆԸ, Չափմա-
նքաւ քիւ 20, իրենց նամակին կցելով Յղը՛
փուլ, մէն մի թիւի համար:

ՔԻՉ ՄԸ ԾԻԾԱՂ

— Մայրիկ, ըսաւ փոքրիկն Աշոտ, ծա-
ռի մը տերեւները ամէնքն ալ իրական տե-
րեւներ են:

— Անշո՛ւշտ ... միթէ ատի հարցնել
կ'արժէ, այդ չգիտնալը մեծ տխմարու-
թիւն է:

— Ինչ գիտնամ, դուն ալ գլխուդ վրայ
այնչափ կեղծ մազեր կը դնես, որ իրականէն
ղանազանիլը անկարելի է:

* * *

— Բարեկամ, ի՛նչ կ'աճապարես, եկուր
սանկ քիչ մը հանգչինք.

— Ձէ բարեկամ, ուշ մնացած եմ, տուն
պիտի երթամ.

— Եկու, կենացդ մէկ հատ մը կոնծենք.

— Լաւ, ես ընտանեւէր մարդ եմ, պէտք
է նախ և առաջ իմ 14 զաւակներուն և ըն-
տանիքիս կենացը համար զատ զատ խմեմ
և հոքը իմ կենացս ...

* * *

— Տղաս, քանի՞ տարու ես.

— Եթէ տունը ըլլամ 10 տարու եմ, իսկ
երբ շոգեկառք նստիմ 7 տարու:

* * *

Մայրը — Ծօ՛՛ Վահրամ, քեզի տուած
կարկանդակս մինակդ կերար, առանց քրոջդ
վրայ մտածելու.

Տղան — Ձէ՛՛ մայրիկ, կերած միջոցիս
միշտ անոր վրայ կը խորհէի, որ չելլայ վրայ
հասնի:

* * *

Ընտանիքի մը մէջ, սեղանին վրայ.

— Խնդրեմ, աւելի լաւ կտոր մը առէք,
ամէնէն դէշ կտորն է որ կ'առնէք կոր:

— Օ՛, սիրելի տիկին, ձեզի տալու հա-
մար էր:

* * *

Սեղանին վրայ.

Հրաւիրեալը — Ի՛նչ համեղ կերակուր,
շատ քիչ անգամ ասանկ կերակուր կերած
եմ:

Տանը տղան (10 տարու) — Մենք ալ ա-
նանկ:

ՏԵՐՏԵՐՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Գիւղ մը , անունը որուն ,
Հիմա լաւ մը չեմ յիշեր .
Նոյն իսկ քիւր տուներուն ,
Սակայն մարդոց քիւն քիչ չէր :

Օր մը մեկտեղ հաւաքուած ,
Պէտքը կրգգան տեսերի ,
Որ աղօթէ առ Աստուած
Պաշտօնը քնն անքերի :

Ապրող համեստ ու պարզուկ ,
Շահող նախկին ֆրիմուկ ,
Գրքան մի պարկեցէ մարդուկ ,
Տանիլ առաջնորդին ֆու :

Ուրը տար գիւղացի
— Ընտրելին ալ , անոնց հետ —
Նըստան ամենքն մեկ մեկ ձի
Ինկան ֆաղիին արահետ :

Հագիւ քէ հինգ վեց ժամէն ,
Այս խումբը հասաւ ֆաղաք ,
Առին ձիերն որ խնամէն ,
Քաղէն մի ֆանի տղայ :

Կրօնասէր , պատուական
Մարդիկ գիւղին ի դիմաց ,
Առաջնորդին ֆու եկան ,
Աջը առին զիւրաքաց :

Առաջ անցաւ միմաւոր
Միջահասակ ծերունի ,
Մարդ մը մօրուօք ալեւոր ,
Յայտնի էր քէ դեր ունի :

Գողդոջ ձայնով խօսք առաւ ,
Ու ցոյց տուաւ քեկնածուն ,
Ըսաւ , այս մարդը շատ լաւ
Պիտ' ըլլայ մեր հոգածուն :

«Ով Մրբազան հայրագութ
Հանիք օձել ֆահմանայ .
Մեր Աստուծոյ տանն օգուտ
Տանձին սորա գոհմանայ» :

«Օրհնեալ ըլլաք ամենքդ ալ ,
Գովելի է ձեր փափաք
Պէտք է այսպէս միտք գրքալ
Ժամու դուռներ չի մնայ փակ» :

Եւ աւելցուց մեծաւորն
«Պէտք է քննեմ զայն ես նախ ,
Կարող գրքնեմ մեծաւորն
Իսկոյն կրնեմ ձեզ ուրախ» :

Ըսէ արդ ինձ դու որդեակ
Խօսքը ուղղեց մարդուկին
Որ կեցած էր շիւք շիւսակ
Շեւտ մը տալով հարցմունքին :

«Նոյն նահապետ երեք հաս ,
Էր մանչ զաւակներու տէր ,
Սեմ , Գամ , Յաբեթ հարազատ
Գիտցիր ասոնց հայրն ո՞վ էր» :

Այս հարցումէն սարսափած ,
Խոր մըսածման մէջ ինկաւ ,
Այնքան ֆրիմուկ չէր քափած ,
Բոլոր կեանքին մէջ հարկաւ :

Խրնդրեմ , ըսաւ , սրբազան
Շընորհ քեք երեք օր ,
Որ ձեզ բերեմ պատասխան
Նքէ չունիք հարցում նոր :

Գերապաշին իր կարգին ,
Տըւաւ միջոց երեք օր ,
Եւ ամենքն ալ սրբազան ,
Աջն համբուրեցին անոր :

Երեք աւուր մէջ սակայն ,
Կեր ու խումբ դադրեցաւ ,
Այս հանելուկն անպիտան ,
Բացաւ սրբին մէջ մեծ ցաւ :

Մոռցաւ անցեալն ու ներկան ,
Մեկ մը լուծէր սա խրնդի՛ր...
Եւ տանը մէջ ֆրոջն երկան ,
Չեղաւ նոյն իսկ ունկնդիր :

Երբ անիկա ձեռքն խցեց
Հետաքրքիր իր խոկման ,
Պարզել պատճառն որ ուզեց
Ինք չի յայտնեց այն պայման :

Երրորդ գիշերն երբ նըստած
Տան մէջ ամենքն սեղանի ,
Բերանը բնաւ չի դրաւ հաց
Յաւին չէր գտած սպեղանի :

Հասկըցաւ քէ չիկար նար ,
Լուռ մընալն ալ չունէր խեր ,
Պատմեց ինչ որ կորոնար ,
Վասն զի դեռ կանուխ էր :

Քեռայրն յայնժամ օրինակ
Տալու , իր անձն մէջ բերաւ .
Գալուտ , Սմբատ , Վաղինակ ,
Երեք տղոցն ալ կարգաւ :

Տըւաւ անոնց անուններ
Ըսաւ , ասոնք որ իմա են
— Ինչպէս երեք ան ունէր —
Ասոնց հօրը ո՞վ կ'ըսեն :

«Քեզ , Արուքին կոչակար» ,
Ըսաւ , տըւաւ պատասխան ,
«Հոս դըժուարին բան մը կա՞ր
Նոյն իսկ գիտէ երախան...» :

Անոր այս գիտիկն վրայ
Ուրախութեամբ վեր ցալկեց .
«Լաւ , հասկըցայ ես հիմա ,
Ըսաւ , հեռացաւ հոնկեց :

Սրբազանին գնաց շիւսակ ,
Անցուցած՝ գիշերն անփուն .
Ըսելիքին լաւ գիտակ
Կեցաւ դեմը ձիգ կանգուն :

«Հայրը Սեմ , Գամ , Յաբեթին
Գրքայ քէ ով է եղեր ,
Քեռայրս , կոչակար Արքին ,
Կ'ընէ երբեմն ալ դեղեր...» :

ՏԵՊԱԳԻՐ

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Աշակերտ ծեծելու զաղեր սովորոյթը հոս ալ հետեւողներ ունեցաւ։ Ս. Լուսաւորչեան վարժարանին աշիւհս ծեծող վարժուհիէն կը վախցուի որ՝ վաղը երկի ծեծող մակդիրն ալ վակցենն ճակտին։ (Խըմբադիր ծեծող վարժուհիներ ալ կը դռնուին արդեօք. Ծ. Խ.)։

ԲԵՐԱ. — Թօմայի ծանօթ նախաճաշարանը, անցեալ զիշերուան պարահանդէսէն դարձող զոյգ մը մասիներ չի կրնալով իրարու հետ յարմարել երիտասարդի մը համար, զիրար կշեռ են ի ներկայութեան նոյն այդ երիտասարդին, որ առիթէն օգտուելով առանց կուտ մը վճարելու կծիկը դրեր է։

ՍԿԻՒՏԱՐ. — Ս. Խաչ վարժարանին յարակից թինթին լսարանը շքեղ թատրոնի մը վերածելու գիմումներ կ'ըլլան, առանց նկատի առնելու թէ՛ կատարուած հարսանեկան հանդէսներու համար քառակուսի դուռ մը և չորս աթոռ չի գտնուիր հիւրընկալութեան կարեւոր պէտքին յատուկ։ (Հախ ունիս քուրուկ . . . նա սանա կուկուկ. Ծ. Խ.)։

ԴԱՏԸ-ԳԻՒՂ. — Տեղւոյս թաղ Խորհրդոյ նոր ընտրութեան չլուկը հազիւ լող կարգ մը աէլմէ չաթմա թաղեցիներ, ինքզինքնին ֆանիսա հռչակելու համար սկսած են չողենալը մեկի նստիլ, պատրաստ սիկառ գործածել, սըխ սըխ եկեղեցի գիմել ու ժամկոչներուն պօլ պախիշներ չաւլել . . . : (Մարդ է որ դուրձէ զկտաւ և զէյթան ուէզին. Ծ. Խ.)։

ՆՈՅՆ. — Շիք երիտասարդ մը որ հմուտ է, վեց ոտք վալսի, ֆուսքի մաջիչի և այլ և այլ նորահնար պարերու կը փափաքի կէս դիշերէն վերջ մասնաւոր դասեր աւանդել օրիորդներու թիւրուսոյց մէթօտով։ (Յիշեալ միւսին մեր սեռին ալ դաս կուտայ արդեօք առտուան դէմ. . . Ծ. Խ.)։

ԽՄԲԱԴՐԱՏՈՒՆ. — Անցեալ օր Մեծ Շուկայի աղառիկի մեծ վաճառատունը եղող Հէրճոյիին միւսիւ մը գիմելով, հարսանեկան ինչ ինչ քոյքերը աղառիկ գնելու համար, զոքանջը երաշխաւոր ցոյց տուեր է։ Բայց նկատուելով որ կիները բռնելիք տեղ չունին, այդ առաջարկը չէ ընդունուեր . . . :

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

ՈՏՔՍ կտել նետի հարկ եղաւ։ Զարմաճ, երբ ես ԱՆԿԻ բաժնուեցայ, փոխանակ արկսելու՝ 625 անգամ վրայ դրի։ Ո՞վ էի եւ ո՞վ եմ։

Մինչեւ ՏԱՍԸ օր ճիշդ լուծողը պիտի ստանայ գեղեցիկ կաղամարի կաղամած մը։

Ասիս օրինակ հարցումներու չարք մը պարբերաբար պիտի երեւի մեր յաջորդական թիւերով, ծանօթ դրագէտի մը կողմէ, որ չուղեր յայտնել իր ինքնութիւնը։

Ահաւորիկ անոնք և հաճոյալի ժամանակ մը մեր աղաներուն համար։

Արտոնսէր ԱՐՄԷՆ ԼՈՌՄԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ՍՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի Գուսէտի բիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐԱՆԳ, ԿԱՆԱՆԵԳ ԵՆ ՏՊԱՅՈԳ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՆ ԸՆԿ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարին երէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
և տղայոց շիք և դիմացկուն ֆոսփում
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
էղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—24



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

[Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

ՃԵՂԱՂ ՎԵՅ ԽԱՆԻՆ]
ՏԱԿ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Զիւսսանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ և Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մտաւային:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ղսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մամնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունէ՝ արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէղիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիւֆիլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով ։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և օսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար ։

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 3 վճարմամբ պատրաստ է հայթայթել ։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՇ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճախորդները ։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 3 զեղչ

ՍՍԿՍՐԿՈՒԹԻՒՆ ՁԿԱՅ

50-13

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են ։